



ՀԱՆԳԻՍ

ՀՕՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ

ԱԿԳԵՐԵԱՆ Հ. ՄԿՐՏՉԻ

Անձն մեծահաւատ և ճշմարիտ առաքինի, կրօնաւոր կատարեալ և ընկերահաշտ միաբանակեաց, խոր աստուածաբան և ջերմ հոգեխօս, անպարծ ազգասէր, բազմարդիւն, բազմագէտ և բազմազիր մը . որ վաթսուն կամ եօթանատուն տարուընէ ի վեր՝ ծանօթ էր ազգիս իր իմաստութեամբն և երկնապատում զրեբրովն, ութսուն տարի Մխիթարեան Մխարանութեանս և Ա. Ղազարումայրավանից ընկեր և հայր եղած, և իննառւն ու երկու տարի կենացս պանդուխտներուն հետ զրուած . Աւգերեան Հ. Մկրտիչ վարդապետն, ամսոյս Յին, իր երկայն պանդխտութեան շրջանը աստուածաշնորհ և մարդավայել փառք և

յաղթանակաւ բոլորելով, նախանձելի կարօտով յուղարկուեցաւ իր հոգեսուն եղբայրներէն և որդիքներէն . և զնաց գուարթութեամբ վայլելու իր շատոնցուընէ փափազած երանութիւնը . և անշուշտ արդարութենէն ալ՝ իր անձնական արգեանց վարձքերուն հետ, ազգին և ընկերութեանը համար այնչափ տարի տաք և ուղիղ սրտով աշխատելուն՝ մասնաւոր պսակ մը ընդունեցաւ . և չեմք տարակուիի՞ որ մեր եկեղեցւոյ առաջին սուրբ Հարց և վարդապետաց փառացն հաւասար հաղորդ եղաւ . ինչպէս որ անոնց վաստակոցն ալ ոմանց հաղորդ, ոմանց հաւասար, ոմանց գերազանց և ոմանց ալ յայտնող և հոչակող եղած էր :

Մահն որ ըստ աշխարհի ամէն բան կը լուեցընէ և կը ծածկէ, ասոր քով որ աշխարհիս օրէնքն 80 տարի ոտքի տակ առեր էր, ինքնին կը լուէ և կը ծածկուի . իսկ ճշմարտութիւնն՝ որ շատ անգամ պարկեշտութեան զգեստը իրեն հեղութեան քող մը սեպելով քաշուած և լուռ կը կենայ, այսպիսի ատեն ճակատը բաց յերեան կ'ելլայ, և համբաւոյն պահած փողը կու տայ ծանօթից՝ հոչակելու զառաքինի և իմաստուն անձն : Ո՛րչափ թեթև և յօժար է սիրտ՝ այսպիսի անձ մը հոչակելու . բայց, ոհ, ո՞րչափ ալ ծանր և դժար, երբոր հոչակելոյն ազնը ւութեանը հետ՝ իր բերնին կամ լսողաց ակընջին տկարութիւնը կը յիշէ : Թողով ուրեմն համբերող ճշմարտութեան՝ իր զիտցած ատենովն և կերպովն քարոզելու և փառաւորելու իրեն հաւատարիմ եղողները, մեզի շատ ըլլայ հոս մեր երախտագէտ ազգայնոց քանի մը բան ըսել լուսահողի հանգուցելոյս վրայ, առանց ուգելու ոչ գովեատը և ոչ վարդը գրել :

Անկիւրացի Աւգէր Հայրապետ բարեպաշտ տանտիրոջ, որուն չորս որդիքն և մէկ գուստըն եկեղեցական և միանձնական վիճակի արժանացան, և որոնցմէ հիմա միայն մէկն՝ մեր Յարզոյ և Եւրոպիոյ ծանօթ Հ . Յարութիւն Վարդապետն կենդանի է ի վանս, երէց զաւկըներէն մէկն էր հանգուցեալ ծերունի վարդապետս, ծնեալ յամի տեառն 1762 ի 11 նոյեմբերի . և իր հօրը ճեռքովը բերուած ի վանս յամի 1774, յետ ուխտագնացութեանն ի Հոռվմ . որով նման Եղիպտոսի երկայնակեաց ճգնաւորներուն՝ 80 տարի կրօնաւորութեամբ ապրեցաւ մեր Միաբանութեան մէջ, ասոր տեսողութեան կիսէն աւելին տեսնալով և մեր երանաշնորհ Միաբարայ նախահօր հին աշկերտներէն ալ շատը . որոնցմէ շատ տեղեկութիւններ ալ առած թէ Ովստիս թէ ազգիս վրայօք՝ մասամբ ի զիր անցուցած և մեր զիւանաց յիշատակ թողած է, և մասամբ բերնուց աւանդած, աննախանձ և առատ աղբեր մը պէս, կէս դարէ աւելի : Իրմէ վերջը յուխտ մտողներուն, գոնէ հիմակ ողջ եղողներուն ամենուն ալ կամ ուսմանց կամ հոգեսոր վարդապետ և հայր եղած է : . . . Ահ, ինչպէս անոյշ կու զան և կանկ առնով կու տան այս Հայր և Վարդապետ անուններն՝ այս անձիս յիշատակին հետ . քանի քանի հարք և վարդապետը, բայց ո՞րչափ հազուազիւտ այտափիսի մը, որ հայրութեան անունը իր յատուկ տեղւոյն մէջ պահեր էր, այսինքն հոգեխառն սրտին կենդրոնը, ուր որ ամէն սիրտ իրեն կը զիմէր, և վարդապետութիւնը՝ միշտ յարմար և ախորդալուր ըրած : Փանի սրտեր այս օրուան օրա՝ այն սրտէն սովորած իրենք զիրենք կ'ուղղեն կենաց զանազան արկածներուն մէջ . և քանիք անոր ձայնովը կամ զրովը՝ իրենց յախտենական ուղիղ ճամբան դուած են, քանիներ հալածանաց և բանտերու մէջ միակ միաբարանք և հոգւոյ ոյժ գտած

են իրեն քաղցր և զգօն զրբերովն , ինչպէս են Դեղ կենացն , Աղօթից բուրվառ-ներն , Մտածականներն , Սրբոց Վարքերն , և այլն . որոնց համար ո՞րչափ հո-գիք հիմա զինքը կ'օրէնքն և պիտի օրէնքն :

Քահանայ ձեռնազրուելէն վերջը յամին 1786 , Հ . Մկրտիչ 10 տարիի չափ դասատութիւն ըրած է ի Վանս , 15 տարի վերակացութիւն կամ դասատիարա-կութիւն պատանեաց և եղարց , և 50 տարիէն աւելի հոգեոր հայրութիւն՝ թէ անոնց թէ քահանայից . և 8 տարիի չափ ալ աշխարհականաց՝ քարոզութեամբ ի Կ-Պօլիս : Վանքին մէջ ասոնցմէ և ուրիշ պաշտօններէ զատ՝ 30 տարի առաջա-կայ խորհրդական եղած է Միաբանութեանը , և 20 տարի ընդհանուր աթոռա-կալ . և կրնանք ըսել թէ կէս գար վանացս հոգեոր և մտաւոր և գործնական բե-ռան մեծ մաս մը ինքն կրեր է : Վասն զի առատաբար ունէր այս իրեք զարմա-նալի և օգտակար ձիրքերն ալ . լուսաւորութիւն հոգւոյ կամ հոգետեսութիւն մը , սրամութիւն և յաջողութիւն զիտութեանց և խոհեմութիւն ի զործս . որով ոչ միայն ի վանս ; այլ շատ հեղ և ի Հռովմէն ի Պօլիս թէ միաբանութեանս և թէ ազգին օգտից համար աշխատած է , և շատ ալ աշխատած , պատճառաւ հակա-ռակողաց , բայց միշտ արդար յաղթանակով պսակուած : Այսպիսի զիպուածները զինքը վարժ և փորձ և հնարագէտ ու անվշատ ըրեր էին , և իր բնական կամ բնածին դարձած բարեպաշտութեանն հետ խառնուած՝ հաստատահաւատ և աստուածախրախոյս ողի մը , որուն նմանը ոչ միայն բաղձալի է մեզի , այլ և մեր սուրբ Եկեղեցւոյ պատիւ սեպելու է :

Այս հաստատ և եռանգուն հաւատքն , որ հիմն է և զերագոյն ամենայն ա-ռաքինութեանց , կրնամք ըսել՝ թէ իր բնութեանն ալ յատկացուցիչն էր . միտքը և սիրտը Աստուծոյ վրայ հիմնած , կերպով մը մարդկային մտածմունքներէ զուրս էր . անոր համար ոչ երրէք անձնական կամ շահու կիրք մը կամ աշառանք ցցու-ցած է իր վարուց և բանից մէջ : Ասկից երկու սեփական և սիրելի առաքինու-թիւններ յառաջեկած էին իրեն , այսինքն են , ուղիղ և անխարդախ սիրտ մը , և աննախանձ ու յորդոր բարեսիրութիւն կամ օգնականութիւն առ այլս . որոնց հետ միացած իր անպատուասէր խոնարհամութիւնն և վայելուչ քաղցրութիւնը՝ միշտ ցանկալի , մերձենալի և օգտակար անձ մը ըրեր էին զինքը :

Այսպիսի ձրիցը մէջ՝ ամենէն պղտիկը պէտք է սեպել իր հմտութիւնն , թէ և ժամանակին զիտնականաց կարգը անցնելու համար՝ բաւական և շատ : Հաս-տատուն ճշմարտութեանց յարումը՝ չեր ներեր իրեն արտաքին զիտութեանց խորը մտնել . բայց ազգային իրաց զիտութեամբ՝ առաջիններէն մէկն էր . և իր յիսուն տարուանքրտանց պտուղն Հայկազնեան մեծ Բառարանն , Սրբոց վար-քերն հանդերձ ծանօթութեամբ , Հայերենէ ի լատին թարգմանած և Լուսաբա-նած զրերը , վկայ են նաև իր շատ հմտութեանն և լեզուազիտութեանն . որով և ըստ մասին զրաւոր վաստակոց՝ այնչափ արդիւնք ունի , որ բաւական էին իրեն մեծ անուն ընելու , թէ որ ուրիշ վաստակ մ'ալ չունենար : Երբոր մէկտեղ բերելու ըլլանք բոլոր իր շարադրածներն , և լատինէ ու իտալէ ի հայ , և հայէ ի լատին թարգմանածներն , զարմանք մը կը բերեն իր կարողութեանն և շատերու տկա-րութեանը վրայ . և հարկ կը լլայ մէկէն խոստովանիլ , որ ասոնց Հեղինակը՝ կամ սովորականէ դուրս հանճար մը ունեցած պիտի լլայ , կամ սովորականէ դուրս

կենաց շրջան մը : Մենք կ'ըսեմք՝ թէ երկուքն ալ . վասն զի իրաւ իր երկայն կենաց մէջ դրեթէ ԵՅ տարի դրիչը ձեռքէ թողած չէ , և մեր զարուն զրականութեան Նեստորն է . բայց իր մտաց յաջողութիւնը , վարժութիւնն և համբերող ջանքն՝ աւելի մեծ կ'երեան այն գործոց մէջ քան տարիներուն շրջանը : Իր գրաւոր վաստակոց միայն ցանկը՝ քանի մը սիւն կը բռնէր զրքիս մէջ , թէ որ դնելու ըլլայինք . այլ միայն զլխաւորներն յիշենք . Ա . 12 հատոր Լիակատար Վարք Սրբոց . — Բ . 2 մեծ հատոր Հայկազնեան Բառարան , որուն մեծ մասը իր աշխատանքն է . — Գ . նոյն Բառզրբին Համառօտութիւնն 1846ին տպուած . — Դ . 4 մեծ հատոր Աստուածաբանութիւնն , որ հեղինակին ամենէն երևելի գործքերէն մէկն է . — Ե . 2 մեծ հատոր Ժամանակազրական պատմութիւն 50 տարուան դիպուածոց մեր Միաբանութեանը . — Զ . 4 մեծ հատոր Հայոց Հարց գործքերը ի լատին Թարգմանած և **Bibliotheca Patrum Armenorum** անուանած . այս ալ Եւրոպացւոց ամենէն ցանկալի գործն է . — Ե . Լատին եկեղեցւոյ Հարց և Վարդապետաց գործքերէ Հայերէն Թարգմանած 12 հատոր , որոնցմէ Ա . Գրիգորի Հովուականը տպուած է յամին 1845 և Ռոտրիկուէցի Խրատներն , որոնցմէ քանի մը ճառերը տպուեցան մօտերս , 1853 . — Ը . Անեկայի , Կիկերոնի , Կ . Նեպոսի և ուրիշ քանի մը Հռոմայեցի Հեղինակաց գործքերը , որոնցմէ առջի երկուքը տպուած են . — Թ . Թասսոնի իտալացւոյն Քրիստոնէական Կրօնից Ջատազովութիւնը Թարգմանած և տպուած յամին 1844 . — Ժ . 10 հատորի շափ հոգեոր զրպոյկներ և աղօթքներ . — ՃԱ . 20 հատորի շափ Թարգմանած հոգեոր զրքեր . — ՃԲ . Համառօտութիւն Աստուածաբանութեան . — ՃԳ . Տիեզերահոչակ Լատին Թարգմանութիւն Եսաբիոսի Քրոնիկոնին , որ Եւրոպիոյ շատ ծանօթ և պատկառելի ըրաւ գթարգմանին . նոյնպէս ՃԴ . Փիլոնի Երրայեցւոյ ճառից Թարգմանութիւններն ալ . այսպէս ալ հաճոյ անցած են ՃԵ . Հեղինակին լատիններէն բանասիրական ճառերն ՎՀ ենետկոյ Աթենէոն ճեմարանին մէջ խօսած , որուն կաճառորդ կամ ընկեր էր : Նոյնպէս Հռովմայու Հնագիտական ընկերութեան անդամակցութեան պատին ալ ունենալով այլեայլ ճառեր ու զրուածքներ ընծայած է նոյն ընկերութեանը :

Բայց այս ամենայն վաստակք և արզիւնք , որ ուրիշի մը և քանի մը ուրիշներու ալ մեծ փառք կրնային ըսուկիլ , գեռ շատ պզտիկ են իրեն ազնիւ վարուց զիտութեան և վարդապետութեան քով . զոր միայն հետը կենսակցելու բաղդ ունողները վայլեր են , և անոր համար աւելի այսպիսի առաքինի անձ մը կորանցընելուն համար կը ցաւին , քան զիտուն մը : Ուղիղ վարուկիլ և յուղղութիւն առաջնորդել՝ իր մասնաւոր և սքանչելի չնորհքն էր , պտուղ իր ներանձնական կրթութեանցը և աստուածային չնորհաց . որոնց յայտնի Թարգման էր իր բերանը , ուսկից ոչ ոք կը յիշէ թէ ընդունայն կամ անշնորհք խօսք մը լսած ըլլայ . և ոչ ոք ալ համարձակեր է իր դիմաց այնպիսի խօսք մը ըսել , խեղկատակութեան շոշորդն ալ դիմացը կեցած չէ . և պարկեշտութեան պատկառելի հայի մ'էր . զարմանալին ալ այս է , որ այսպիսի զգուշութեան և արթնութեան հետ՝ կենակցութեան մէջ ամեննեին խորշել տուող և խիստ կերպ մը չէ ցըցուցած , հապա ընդհակառակն չափաւոր և քաղցր . և այս ալ կրթութեամբ ստացած : Վասն զի ի բնէ եռանդուն և տաք ըլլալն ալ յայտնի էր . և թէ որ իշխանութեանը ա-

տեսն՝ երբեմն շուտով կամ տաք շարժէր յանդիմանութեան, զիտէր այնպէս ալ շուտ և անոյշ սիրտ առնուլ, որ յանդիմանութիւնն ալ ծանր չէր գար. վասն դի ոչ երբէք նախատական կամ արհամարհական խօսք զրուցած է, հապա իր ուղիղ սրտին համեմատ՝ ուրիշներու ալ ուղղութենէ խոտորիլը կը յանդիմանէր. շատ աղէկ զիտէր զատել զանձն և զգործն, զոր բազումք չընտրելով խրատնին ոչ միայն անպուղ՝ այլ և արհամարհ կը լայ. ինչուան որ խրատուածը սրտանց չփրուի խրատողէն, խրատը սիրելի չըլլար խրատուողին, այլ և ալ գէշ. Հանդուցեալը Միաբանիցս թերես ասկէ մեծ և զերազոյն օգուտ և շնորհք չէ բրած, և ինչուան իր խոր և յետին ծերութիւնն ալ՝ այս օգուտը ընծայած է, շատերուն հայր հոգու ըլլալով։ Ժամանակին երկարութիւնը՝ շատ բան իրեն մոռնալ տալով՝ միայն այս աստուածային ճանապարհը, զոր ամենէն առաջ սովորեր էր, չըմուցուց։

Ի բնէ բարեկազմ, բայց և փափուկ էր ըստ կրթութեան սրտին, թէ և ոչ բնաւ փափիկասէր, մաքուր և ոչ պճնասէր, չափաւոր և ատեցող աւելորդաց. շատ տարի ոտնառութեամբ (փոտակրա) նեղուած, քանի մը անզամ ալ ծանր դրաւոր աշխատութեամբք յոդնած կաթուածէ զարնուելով ինչուան մահուան դուռը հասած, ետ գարձեր էր, և խոր ծերութիւնը 12 տարի անհիւանդ անցոց, Աստուծոյ ուզելովը որ իր արդիւնքը և մեր միսիթարանքը աւելցընէ։ Սակայն իրեն համար կեանքը ի վաղուց զզուելի եղած էր, բայց առանց զանդատելու կամ աշխատանքէ ետք կենալու. քսան տարիէ ի վեր անդազար փափաքն և խօսքն էր այս յերկար պանդխառութենէն երթալը և յափտենական կենաց հասնիլը, որուն համար զրեթէ միակերպ պատրաստութիւն և խոկումն կընէր, որ ըստ փիլխառփայից ալ կատարեալ իմաստութիւն է։ Այսպիսի փափաքով և աշխատանքով հասնելով կենաց 84 տարին, անկէ ետեւ սկսաւ ուժէ ինկնալ, և ծերութեան մոռացութիւնը տիրել. և երբոր Արհիապատիւ Աթրահայրնիս Միթթարայ աթոռը նստաւ յամին 1846, անոր հին և բազմարդիւն Աթոռակալն ազատ ըրաւ պաշտօններէն, և իր բազմամեայ արդեանց և արժանեաց նշան մեծարանաց՝ ի դիմաց Միաբանութեանս նուիրեց իրեն Հայր Վարդապետ կոչուիլ. մենք ալ ուրախութեամբ այնպէս անուանեցինք և պիտի անուանենք. զի թէպէտ Տէրն մեր պատուիրեց որ չանուանեմք զոր հայր և վարդապետ երկրիս վրայ, բայց ճանչցանք որ իրեն նման հեզ եղող և քաղցրութեամբ սովորեցընողն արժանի է այսպէս կոչուիլ յանուն նորա. և զեռ փափաքով կը նայինք ուրիշ մալ յարմար գտնելու այսպիսի անուանց։ Քանի մը տարի ալ զեռ ուտրի վրայ անցընելով և միայն խօսքով և կենակցութեամբ շինութիւն ըլլալով Միաբանից, երբոր աւելի ուժէ ընկաւ, զադրեցաւ պատրաբազ զրուցելէն, բայց ոչ լսելէն. և երբոր 90 տարուան ըլլալով աշուրներն ալ դադրեցան այս անցաւոր լոյսը տեսնելէն, և անկողինը քաշուած իր երկրորդ կենաց լոյսը կը փնտուէր, զեռ ամեն կիրակի ուրիշ ձեռքի օդնութեամբ, և վերջերը աթոռով շալկուած կ'երթար յեկեղեցի կ'ընդունէր զառքը խորհուրդները։ Այսպէս անցուց երկու տարի ալ, ձերութենէն զատ հիւանդութիւն չունենալով. միափն ալ զգաստ էր, մանաւանդ հոգերոր խնդրոց և իր պարտուց մէջ. և բերանը դրախտի շունչ կը չնչէր, անդազար հառաջանքով աստուածութեան փափագելով, և զուրիշներն ալ յորդորելով

որ աղաջեն զԱստուած զինքը իրեն կանչելու . թէպէտ և յայսմ Աստուած մեր լոռութեանը աւելի լսեց . վասն զի ինքը ամենեին ճանձրոյթ մը չտալէն զատ՝ դեռ մեծ միսիթարութիւն էր մեզի բերնէն խօսք մը լսելնիս և միայն զինքը տեսնելնիս ալ : Բայց ծեր բնութիւնը շատ աշխատեր և յոզներ էր , ալ կը փոթար մտնել ի հանգիստ , կամաց կամաց ինչնալով ի վախճան . տարւոյս փետրուար ամսոյն մէջ զզալի եղաւ իր յետին տկարութիւնը և ալ աւելի մարտի ամսամտին . անոր համար նոյն իրիկունը տրուեցան իրեն սուրբ խորհուրդներն և յետին օծումն . զոր և զզաստութեամբ և հին հաւատքով ընդունելով վկայեց թէ նոր ոյժ մը ստացաւ հոգւոյն վրայ . և իբրև նահապետ Միսիթարեան Ուխտիս օրհնեց բոլոր միաբանութիւնը , և զուարթութեամբ կը սպասէր կենաց փոխոխութեանը . ըստէպ ըսելով թէ արթնութեան և թէ մահահրաւէր ջերմին մէջ , կու գամ կու գամ , չեմ ուշանար հոս տեղս . թողուցէք որ երթամ : Երկրորդ օրը զրեթէ անրարբառ անցուց , բայց զզաստութիւնը իմացընելով կարճ խօսքերով և շարժմամբ՝ նոյն իրիկունը չնչի նեղութեամբ և տազնապով իմացուց մահուան հարկը . և ամսոյն երրորդ օրուան արեց չելած ինքը կանուխ աչքը բացեր էր յարեղակն արդարութեան յաւիտենականութեան մէջ . թողով իր սրբասէր հոգւոյն 92 տարուան ընկերը արդարոց խաղաղ քունին մէջ . որուն վրայ նայողն՝ զարմանալով կը նշմարէր հարիւրամեայ նահապետի հասակ մը և մանուկ կուսի մը մաքուր չնորհք :

Բոլորեցանք Միաբանքս , մանաւանդ թէ որբ որդիքս՝ մեր հօրը յաղթական դահոյիցը քով , և եկեղեցական կարգաց ձայներով մեր սուզը քաղցրացընելով տարինք այն ցանկալի նահաստակը իր վարձահատուց տիրոջը և մեռելոց և կենդանեաց անդրանիկ եղողին նման հանգչեցընելու , ինչուան որ յարութեան փողը հրամմէ արթննալ : Եւ թէպէտ ճանչցանք և կը ճանչնանք որ այսալիսի մեծ անձ մը իր փոքրկացեալ ազդին համեմատելով՝ շատ մեծագոյն յիշատակարանաց արժանի է , բայց մեր երախտապարտ մեծարանքը և չափաւորութիւնը առ այժմ իրեն դատ որմնապատ դամբան մը նուիրեց՝ եկեղեցւոյն աւանդատան մէջ , որուն վրայ արձանազիր քար մ'ալ պիտի ձգուի . յայտնելու յետնոց՝ մեր եղբարց և օտարաց , մէկ Անձ մը , որ սուրբ Եկեղեցւոյ փառք , իմաստութեան պատիւ , մարդկութեան օրինակ , ընկերութեանս մեծ օգուտ , և Հայ ազգիս պարծանք եղաւ , աննախանձ և անաշառ ծանօթից վկայութեամբ :

Ինքը զնաց արդ ուրախութեամբ իր աստուածակրութեան վաստակոց վարձքը թաթաղուն զեղուն իր զողն ընդունելու . և զմեզ թէպէտ տխրութեամբ լցուց , բայց ի միսիթարութիւն որդեկացը սրտին մեզի թողուց իր մեծաջան քրտանց անմահական արդինքը :

